

Այս էջերը հետաքրքրական են եկղ. պատմութեան համար, այնպէս որ եթէ բոլորովին իբր ստոյգ ալ ընդունինք Սիմէոնի քննադատութիւնը Պոլսոյ պատրիարքներուն համար, գոնէ շատ նոյն-դէպ է կոլոտի նկատմամբ: Նպատակաւոր՝ ըսի, որովհետեւ Էջմիածին տակն ու վրայ էր այն ատեն եւ կարող կաթողիկոս մը պէտք էր ընտրել եւ Պոլիս, իբր կենդրոն, միշտ իրաւաւեւակշիռ գիւրքը պահած է Էջմիածնի կաթողիկոսի ընտրութիւններուն մէջ. կոլոտ հեռատես, ուղեց որ կարող եկեղեցական մը ընտրուի Էջմիածնի Աթոռը բազմելու համար:

Կոլոտի նախագահութեամբ կը յաջողի այն ընտրութիւնը Ուլնեցիին վրայ, որ Սիմէոնի ըսածին պէս ոչ պարզափոք էր ոչ ալ անդէպէ՛ք Էջմիածնի իրաւասութեան: Անշուշտ ամէնէն յարմարն այն ատեն ինքն Կոլոտ կամ Շղթայակիրն էր. բայց երբեք ո՛րեւէ ձգտում չեն ունեցած ասոնք. եթէ ուզէին՝ կ'ընտրուէին¹:

1 Շղթայակիր 1737 ին կաթողիկոս ստուգիւ ընտրուեցաւ. բայց Զահեցիին տեղի տալով հրաժարեցաւ. ընաւ չէին ուզեր որ իրենց պատճառով խնդիր ծագի, կուսակցութիւն կազմուի: Շղթայակիր ինքը կը պատմէ թէ ինչպէս երէց իրեն կոչում եղած է կաթողիկոսութեան եւ չէ ընդունած: Երրորդը տեղի ունեցաւ երբ Պոլիս եկած էր Շղթայակիր:

1737 ի Վարդապետին, Իւսկիւտար Ս. Կարապետ, հրուսաղէմի Վանքն էր Շղթայակիր, «ի Սուրբ Էջմիածնայ երկու Վարդապետք եկին Թովմայ եւ Մկրտիչ անուամբ, եւ Նուիրակն եւ Պարոն Սջէմքն եւ այլք. յետոյ եւ մեր մահտեսի աղայքն, եւ բազմակնիք Ժողաբ մի եգին առաջի մեր, յորում զմեզ խնդրեալ էին լինել կաթողիկոս. եւ իմ երեք օր պայման խնդրեալ՝ զնոսա յղեցի. բայց Պատրիարք Վարդապետին (= Կոլոտին) եւ մեր մահտեսեացն ի ծածուկ ասացի, թէ այս երեք անգամ եղել որ վասն այսմ իրի զմեզ խնդրեն. բայց անհար է ինչ լինել. զի անարժան եմ: «Եւ զկնի երից աւուրցնեկաք ի սուրբ Աստուածածնի Եկեղեցին, եւ յայտնի առաջի ամենեցուն հրաժարեցայ, եւ